

1891

ԲԱԶՄԱՎԵՊ

ՀԱՆԴԻՍԱՌԱՆ

ՀԱՏՈՐ ԽԹ

ԱՊՐԻԼ

ՀԱՅԿԱԿԱՆ Փ

ՀԱՅ - ՎԵՆԵՏ

(Տես յէջ 33)



**Երկու տարի վրան անցնելէն ետքը՝ մեռաւ
բարեկամն վենետաց Օշին թագաւոր, (20 յուլիս
1320), ժառանգ թողլով իր երկոտասանամեայ
լեւոն դ գեռահասակ որդին, և խնա-
մակալ կարգելովն սմա վերը յիշուած եր-
կու Հեթմեանքը, դքսին հետ թղթակցե-
լու համար, և զՊաղտին մարածախտ:
Նոյն ժամանակին հանդիպած արշաւանք
եգիպտացւոց ի Հայս, թագաւորին անչափահասութիւնը, կոռիկո-
սոյ տեսառն Օշին Պայլի ձեռներիցութիւնք, առ վայր մի վրդովեցին
զելիկիա, և որոյ տատանումն հասաւ մինչև ի վենետիկ. վասն զի
Օշնի մահուրնէն ամիս ու կէս ետքը (8 սեպտ. 1320) ատեանը կը վըճ-
ռէր որ ի կիլիկիա երթալու վրայ եղող Պայլը Յովհաննէս Գարողոց
մնայ ի մայրաքաղաքին, և իրեն փոխանակ՝ արդէն սահմանուած
գեսպանն ուղևորի, որոշելով նաև իրեն թոշակին ու ծախուց
չափը. Այս գեսպանն էր Միքայէլ Յուստինեան, որուն մեծ խնամ-
քով յանձնեցաւ, թերեւս յառաջ քան զմահ Օշնի, դիւրացընել վե-
նետացի վաճառականաց առևտուրը, Հայոց թագաւորէն խնդրելով**

որ վերցընէ արդէն սպրդած ղեղծմունքը, ու կրկին հաստատէ նախկին ուղղութիւններն : Մտադրութեան արժանաւոր վկայականներէն մէկն է իր ձեռքն տրուած հրահանդը, որոյ պատճէնը պահուած է ի զիւանս . յորումնախ կը խնդրէ նորոգել հնաւանդ արտունութիւնն : Թագաւորն փութաց կատարել զայն՝ ի փռանկ լեզու գրուած վճռով մը (մարտ 1324), և յետոյ ուրիշ այլեայլ առաջարկութիւններ կ'ընէ . յորս զլիսաւորքն են՝ որ վենետք առանց արգելից և գժուարութեան կարող ըլլան իրենցմէ ի Հայս բերուած ոսկին ու արծաթը վաճառել : Թագաւորը թոյլտուութիւն ըրաւ ոսկւոյն, բայց արծաթոյն կէսը կ'ուղէր իր փողերանոցին մէջ ունենալ, որպէս զի կարող ըլլայ Եղիպտոսի սուլտանին հարկի դրամը հայթհայթել : կը պահանջէին դարձեալ վենետք որ Հայք իրենց փողերանոցին կշիռքը փոխեն՝ իրը անձիշտ . որոյ պատասխան տրուեցաւ ի մերոցն թէ կշիռք ճիշտ են, և խարդախութիւնը թերեւս կշռողին կողմանէ է : խնդրեցին դարձեալ և չնորհուեցաւ վենետաց որ կարենան գնել առանց մէկէնիմէկ փոխարէն վճարքն ընելու, միայն հատուցանելով զաշնագրին մէջ նշանակուած տուրքը : Տրուեցաւ նոցա ազատութիւն գետանցից, թոյլտուութիւն կապելոյ զնաւս յերկաթի անուրս ծովարերդին Այասոյ, և ապահարկութիւն ի սովորական սակէ զնման մետաքսեայց և մորթեայց ի Սիս և այլուր : Որովհետեւ անձուկ էր նաւահանգիստն՝ շատ բեռ թափելու անյարմար, իրենց խնդրանացն համաձայնելով հրաման չնորհուեցաւ որ կարող ըլլան թափել և ի ծովափնն, բաց յարծաթոյ՝ զոր հարկ էր հանել ի նաւահանգիստն : Բաց յառանձնաշնորհութեանցս՝ թագաւորին Հայոց մասնաւոր խնամոց կը յանձնուի տէր Նիկոլայոս ոմն՝ սարկաւագապետ Տարսոնի . կը չնորհուի մթերանոց մը (magen) գերեզմանատան մօտ : Մնացածը կրնան գտնել փափաքողք և հետամուտք առ Լանկլուայի¹ :

Այս ամէն խնդրուածոց գլուխները կնքուելով արքունական փոքր կնքով, կը յանձնուի հայցողին, և որ թուի թէ փութով զրկեր կամ անձամբ բերեր է ի վենետիկ, և թերեւս յառաջ քան զՊարգեւագիր Լեւոնի զտուեալն ի, և մարտի, փռանկ լեզուաւ, համաձայն չնորհելումն ի հօրեղբօրորդոյն իւրմէ ի Լեւոնէ գ, հայ բնագրին հետ և լստին թարգմանութեամբ և ոսկեղէն կնքօք : որոց համար հիննօտարաց դիւանն կ'ըսէ թէ Պայշն Գարողոյ բերեր էր ի վենետիկ և հրամանաւ դքսին զրեր էր ի տան Դործակալութեան դքսական ապարանից (Procuratia). և յետոյ միւսանգամ զրկուեցաւնա ի Հայս ի սկիզբն 1322 տարւոյն, ընդունելով տասնուշորս լիրայ կրոսից ի նորոգութիւն տանն յԱյաս, և հետը տանելով նաև զպատճէն խնդրոց

և շնորհաց առ դեսպանն Միքայէլ Յուստինեան, իբրու վաւերական և ապահովութիւն իր հայրենակցաց իրաւանցը, որ յետոյ տրուեցաւ նաև իր յաջորդին Պիանիսիոյ Մալիբիէրիի յամի 1326 յինն յուլիայ: Եւ որովհետեւ գեռ մանուկ կամ անչափահաս էր թագաւորն, ինչպէս ըսինք, հաւանական է կարծել թէ ոչ միայն քարտուղարն՝ կոստանդին արքեպիսկոպոսն Դրազարկի, այլ և պայլքն երկոքին Հեթմեանք դրին իրենց ստորագրութիւնը. ինչպէս կը տեսնուի ի համառօտ վաւերական Պարգևագրէն, որ հրամանաւ և հաւանութեամբ թագաւորին տրուեցաւ նոյն օրերն (16 մարտ 1324) Մոնթլուզեցի վաճառականաց, որուն կը ստորագրեն երկուքն ալ սոսկ իրենց անուամբն Հերում. Հերում. յորոց մին էր չամբուլայն և միւսն սենեսկալ պետութեանն:

Թէպէտ և անտարակուսելի, այլ չյաջողեցաւ ինձ զիւտ յիշեալ ընծայից զոր այս անգամ Հասարակապետութիւնն զրկեց առ լեւոն, և որ անշուշտ հարկ էր որ մեծագին և մեծափառ ըլլային, թէ ՚ի պատճառս շնորհացն զոր ընդունեցան ի ձեռն Մալիբիերի դեսպանի, և թէ վասն հարսանեաց թագաւորին որ ի նոյն ամս կատարեցաւ. վասն զի այն ժամանակաց սովորութեանն համեմատ կը փութային արքայազուն մանկունքը պսակել, անոնց ապագայն ապահովելու, կամ յուսացողաց և հետամտից հնարքը կարճելու վախճանաւ: իսկ այս անգամ մեծագոյն եւս էր փոյթ՝ խորագէտ և փառասէր իշխանին կոռիկոսի՝ Օշնի, որդւոյ ծանօթ պատմը ինչեթմոյ, արքունական պայլի պաշտաման բարձրանալ. սա հարսնացոյց թագաւորին զդուստորն իւր Ալիծ, և ինքն կին առաւ զմօրու նորա՝ զերկրորդ կին Օշնի զբովհաննա: և ոտն առ ոտն յառաջ երթալով, և ինչուան մահու չափ հարստահարելով զպարոնայս, արքունեաց պատկանող զանազան կալուածներ նուածեց. որով զարգացեալ թագաւորն սթափեալ, և հաւանականարար նաև գրգեալ յայլոց, իբրև արքունի իրաց պարտաւոր (lèse majesté) սպաննել տուաւ զինքը և զեղբայրն (1329). մանաւանդ զի յանդգներ էր նա դատապարտել և ըսպաննել ինքեան իսկ թագաւորին հօրաքոյր՝ զդուսողն Զապլուն, ըղկին հաշտկելոյն Ամաւրեայ իշխանին Տիւրոսի, եղբօր կիպրոսի Ենրիկ թագաւորին, որ Բ լեւոնի վեշտասան որդւոց և գստերաց անդրանիկը էր, և միակ կենդանի մնացած:

Բայց չորրորդս այս լեւոն՝ իր բազմածուփ թագաւորութեան բըսանուերկու տարիներուն մէջ, — որ աղիտալի եղան Այասոյ կորստեամբ, այլ ուրիշ կողմանէ ոչ նուազ բարգաւաճ, յորոց այլն այլ յիշատակք կան մնան ցայսօր, ինչպէս նաև երկու մատեանք ընտիր գրչութեամբ, — ջանաց սերտ պահել վենետիկյ հետ ունե-

ցած յարաբերութիւնը, թէպէտ և ի հարկէ դիպաց և արկածից հասելոց ի վերայ երկրին՝ բռնադատուելով երբեմն ամփոփել զայն, ըստ ոչ յօժարութեան և շահու վենետաց։ Այս վերջիններս ալ ոչ միայն դիւանագիտական (diplomaticus) և վաճառականական յարաբերութիւններ պահեցին հետք, այլ և ուրիշ կերպով մ'ալ այսինքն առանձնականի մը զրուածներով և ջանիւք, ի պահպանութիւն թագաւորութեանն Հայոց, գրողն էր գերահռչակն Մարինոյ Սանուտոյ Դորչէլլոյ, ծանօթն և համախոհ մերոյս Հեթմոյ-Անտոնի, որ սիրով ազատութեան սրբոյ Երկրին ոգւով չափ վառուած, առ որ օժանդակ մեծ կը համարէր զթագաւորութիւն Հայոց, կը թղթակցէր ընդթագաւորին, ինչպէս քաջայայտ կ'երենայ իր մէկ ծանօթ թղթէն գրելոյ իբր յամի 1326, յորում կարեսոր ծանօթութիւն կան. և նախ թէ Լեւոն զրեր էր յառաջագոյն առ Սանուտոյ. և երկրորդ՝ զի պատգամաւորութեամբ զրկեր էր առ քահանայապետն Հռովմայ զեղ. Թաղէոս արքեպիսկոպոս կաֆայի հանդերձ ընկերակցօք. — և երրորդ, թէ և ինքն Սանուտոյ անձամբ և զրովք կը յորդորէր ըզգապն և զծիրանաւորս, ինչպէս նաև զթագաւորն Փռանկաց և զԱնգղիոյ և անոնց պարոնայքը, զկոմսն Հաննովէրի և զայլս յօդնութիւն Հայոց. — չորրորդ, թէ զայս ամենայն պիտի ծանուցանէ թագաւորին եղ. Հուգոյ ի կարգէ Քարոզողաց։ Սանուտոյի ոչ միայն թուղթք՝ ամփոփեալք ի հաւաքմունս (Gesta Dei per Francos), այլ և իր հոչակաւոր Տարեգիրը (Diarii) լի են ծանօթութեամբք այն ժամանակին Հայոց թագաւորութեան վիճակին վրայ, և անոնց ի նպաստ թելաղրութեամբք։ Նոյն վախճանաւ մեծ ջանք ցուցին քահանայապետքն Յովհաննէս իի և յաջորդքն. բայց Փռանկաց և Անգղիոյ թագաւորաց իրարու հետ հակառակութիւնք, արևմտականաց դանդաղութիւնք, անվախճան վէճք և քննութիւնք զհաւատոց Հայոց, անօգուտ ըրին Սանուտոյի և Հեթմոյ ջանքն ի պահպանութիւն կիլիկեան իշխանութեան Հայոց, որ նախամարտիկ էր քրիստոնէութեան, ինչպէս նաև օգուտ և պարծանք քրիստոնէից։

Դառնանք հիմայ յուղղակի յարաբերութիւնս Հասարակապետութեանն, որ ի ժամանակին կարեսոր խնդիր մ'ալ ունէր, զոր առանց մեզ յայտնելոյ՝ 1326-7 ամաց վճիռք կ'իմացընեն. և զոր քննելու վախճանաւ ընտրեցան պետական գիտնականքն կամ իմաստունք։ Նոյն ատեններն ստէպ գեսպանութիւնք կ'ըլլային Հայոց ընդքահանայապետական արքունեաց, և որ շատ անգամ վենետիկէն կ'անցնէին։ Երբ նոյն պաշտամամբ յամի 1327 Յակոբ թարգման եկաւ ընդ Արևմունդի, սա մնաց ի Վենետիկ, ուր այլք ուղեւորեցան ի Հռովմ, թերեւս կարեսոր խնդրոյ մը համար, որպէս մարթ է կարծել հաշտութեանն Հայոց ընդ կիպրացիս, թէպէտ և արդէն հաստատուած

էր այն, և քահանայապետն Յովհաննէս իթ խնդակցութեան նամակ գրած առ թագաւորս երկուց աղգաց, բայց գեռ քանի մի պայմանք ի կախ մնացած էին, և առանձին խնդիրք կային. ուստի և Հասարակապետութիւնը կը յանձնէր Պայլին Հայոց՝ երթալ խօսիլ կիպրացւոց հետ (1328). իսկ յերկորդ ամին կը սահմանէր ընտրել զիտունս և անոնց ձեռքով քննել առանձինն զգէպս Հայոց և կիպրացւոց: Նոյն ժամանակին դեսպան մ'ալ զրկուած էր ի Հայս, և իրեն ծախուցն համար երկու առ հարիւր փող. և ինչպէս կ'երենայ, միւս այլ դեսպան կը պատրաստուէր երթալ, և ասոր համար ալ դրամ՝ կը սահմանուէր. և դեսպանը զրկելու վճիռը կը կրկնուէր, որ թուի թէ ըլլայ հին ծանօթ դեսպանն Գր. Տոլֆին, և քիչ ետքը կ'որոշուէր պատգամաւորութիւնը և առ թագաւորն Հայոց ըսելիքը: Նոյն ատեններն ի Վենետիկ էր նաև Հայոց դեսպանն, և որոշուեցաւ (19-21 յուլիս 1329) ի հասից պետութեան ընծայ տալ նմա 400 լիպր կրոսից. և մինչ ստէպ յանձնարարութիւնք կ'ըլլային Հայաստան երթալու խալէք և նաւեր շինելու, ամենայն խնամքով պատուէր կը տրուէր հոն պատահած անցից քննութեան, և ութ օր կը յերկարէր իմաստնոց ժողովոյն քննութեան համար ժամանակը: Եւ որովհետեւ դարձեալ եկած հասած էին դեսպանք ի Հայոց (1331), կը հըրամայուէր ժողովականաց խօսիլ անոնց հետ, և խնդրել որ խօսին ու յարմարցընեն ընդ թագաւորին, որ վերցընէ իր և հօրը օրերը վաճառականաց վրայ դրուած հարկաց և բաժից ծանրութիւնը: Այս պահանջից վրայ, ինչպէս կը յիշէ ընթերցողն, մանրամասն ծանօթութիւն տուեր էր Հասարակապետութեան՝ Պետրոս Պրակատին, և թէ պատճառն եղած էր Հայոց ընդ եղիպտացիս պատերազմունք, և վերջնոցս չարաշար զարնուելով Այասոյ քով (1330), վրիժառու յարձակմամբ տիրելը քաղաքին (1331). որով վաճառականաց վընաս հետեւելով և բաժից ծանրութիւն, կամայ ակամայ պիտի նեղուէին ի Հայոց. և հարկ կ'ըլլար դարձեալ կարգել քննիչս յիմաստնոց (20 յուլիս 1332) ութ օր պայմանելով. միանգամայն փութոյ պնդութեամբ՝ ի վերանորոգութիւն դաշանց դեսպան զրկել առ թագաւորն՝ զոմն ի վաճառականաց. ուստի կը յանձնուի պաշտօնէից Աղի (Salis) ճանապարհի ծախը հայթհայթել, որպէս զի ուղեւորի առաջին ճամբայ ելլող նաւով: Մինչ այս պատրաստութեան վրայ էին, ստիպողական նամակը կը հասնէին ի Հայոց, յորոց ի քննութիւն՝ կը վճռէր ծերակոյտն (28 դեկտ. 1332) որ զուքան և խորհրդականք որոշեն երեք իմաստունս որ պարտաւորին տասն փողոյ տուգանք մինչեւ ցկէս յունուարի ծանուցանել գրով ինչ որ իրենց պատշաճական երենայ: Դրկուած դեսպանն էր Յակոբ Դրէվիլան, որ իմացուց գործոյն յարմարութեան դժուարութիւնն. որովհետեւ գրգռուած էին Հայք՝ Վենետաց կողմանէ ցոյց տրուած քանի մի հակառակութեանց

համար, և Պետրոսի թիծալոյ՝ զբանտարկեալն գոնդարինի ազատելուն, որով բռնադատեցան պատուհասել զնա՝ ձեռուըները կարել տալով։ Այս ամէն բանին համար ծերակոյտն գումարելով ի խորհուրդ (17 յուլիս 1833) սահմանեց որ դուքսն իր խորհրդականներովն և ժողովով վաթօնից՝ դեսպան կարգեն վաճառականներէն մէկը. որ Հայաստան երթալով՝ բերանացի խօսի ընդ թագաւորին, պահանջելով իրմէ տրուած Պարգեւագրին դաշինքը պահպանել, յայտնելով նաև Յակոբայ Դրէվիզան զրով բերած գանգատանաց զլուխները, և Պայլին թուղթը՝ զոր թագաւորին դիմացը դնէ, եթէ սա չգիտնալ ձևացընէ։ Ասկէ զատ՝ խնդրել որ այն կողմանց արծաթոյ նուազութեան համար ի Վենետաց բերուած արծաթոյն գինը բարձրացընէ, և մէկ ոսկի տուկատը՝ քսանուչորս թագաւոր զրամոց արժէք ունենայ, և յառևտուրս՝ առ պակասութեան արծաթոյ՝ վարուն սեպուի նաև ոսկին։ — Եթէ թագաւորը՝ ժամանակին պիտոյից համար, (ինչպէս կը պնդէր նաև իր դեսպանն ի Վենետիկ) պահանջելու ըլլայ տուրս մէկ առ հարիւր, ըսէ իրեն թէ յերքն կամաւորապէս ի շնորհս նորա և ոչ ի պարտուց՝ կը վճարէին զայս, և թերեւս նորէն վճարեն։ — Թէ որ պահանջէ զբաժ վաճառուց, ջանայ ազատընել. իսկ թէ այդ անհնարինէ, գէթ յարքունի տրոց ազատութեան շնորհքը ձեռք ձգէ։ — Եթէ ուզենայ յուզել զարկելոս՝ որպէս զի չըլլայ թէ թագնաբար արծաթ ներս մոցընեն, խնդրէ խափանել զայնպիսի հետազօտութիւն. բայց ի ստիպելն՝ գէթ գոհ ըլլայ Պայլին զիմաց եղած երդմամբ։ — Եթէ ուրիշ դժուարութիւն կամ փոփոխութիւն ուզենայ ընել թագաւորն, դեսպանը խոհեմութեամբ ընդդիմանայ։ Թէ որ այս եղած առաջարկութեանց թագաւորն չհաւանի, դեսպանը ծանուցանէ թէ վենետք իր տէրութեան սահմաններէն դուրս պիտի ելլեն, և հրատարակէ զժամանակ ելլիցն մինչեւ յառաջիկայ ապրիլ ամիս, և չմեկնողը՝ եթէ վաճառականէ, հինգ հարիւր լիպրա կրօսից տուգանաց տակ իյնայ. իսկ եթէ ոչ՝ յիսուն լիպրա։ Որոնք երեք տարիէն աւելի բնակած են ի Հայս և կ'ուզեն հոն մնալ ազատ ըլլան. իսկ ուրիշ տուգանելոց ինչք կամ ձեռագործք չընդունուին՝ բայց եթէ յիսուն առ հարիւր տուգանօք. նոյն տուգանաց տակ ինկնան ապրիլ ամսէն ետքը վաճառք տանողքըն ի Հայս։ Վենետիկոյ մէջ ալ ծանուցուի թէ որոնք տարւոյս դեկտեմբեր ամսէն ետքը նաւելու ըլլան, նախ կիպրոս երթալով տեղեկանան։ Թէ թագաւորը՝ Վենետաց հետ իրաւախոհ եղած է. ապա թէ ոչ՝ չերթան ի Հայաստան. առանց ի կիպրոս հանդիպելու հոն գնացողք՝ ետ դառնան. իսկ թէ ոչ՝ նոյն տուգանաց տակ ինկնան. և այս կարգաւորութիւնք և սահմանք ծանուցուին վենետաց Ռեզզիչ (Rector) պաշտօնակալաց, կիպրոսի Պայլէն տեղեկանալով, և յանձնուին հանդիսաւոր դեսպանի, որոյ թոշակը ըլլայ որպէս Յակոբայ

Դրէվիզանադոյի : Ոռ այս պաշտօն ընտրեցաւ ՊՇ. արռու Պրակատին վաճառական . և իրեն տրուելիք թոշակը պիտի հայթհայթէին Աղի և ծովու պաշտօնեայք , շարունակելով հինգ առ հարիւր հարկը զոր կ'առնուին Դրէվիզանադոյի համար . և զեսպանը հայագնաց խալէ-իւք պիտի ընէր ուղիւ որութիւնը :

Ժողովոյն վճռոյն համեմատ՝ իմաստունք պարապելով ի ըննութիւն այսր ամենայնի , ծանուցին նմա (28 յուլիս 1833) թէ որովհետև զեռ հասած չեն ժողովոյն կողմանէ առ թագաւորն զրուած ծանր թուղթք , ինչպէս նաև իր գեսպանէն ի վենետիկոյ առ նա ուղղեալքն . և Լեռն բարեկամութեամբ էր ընդ Հասարակապետութեանն , պատշաճ կը թուի սպասել Պայլին գալստեան խալէիւքն ի Հայոց , հասկընալով թագաւորին միտքը . և ժամանմանէն տասնուհինգ օր ետքը՝ կոչել զնա ի ժողով ծերակուտին , լսել և այնպէս առնել զարժանն :

Շարունակելի

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆ

ՅԱՐԵՒՄՈՒՏՈՒՄ

ՀԱՅ ԲՈՆԱԾԻՐՈՒԹԻՒՆ

ՅՈՒՍԱՉ ՔԱՆ ԶԲՈՂՊ ԵՒ ԶԳԻՑՈՒԹԻՒՆ ԼԵԶՈՒԻ

Գերմանացի բանասէրն Գ. Ա. Շրումբֆ (G. A. Schrumpf) , Գաղղիոյ Համալսարանին անդամ , սիրող և մեծ ջանքով հետամուտ մեր պատմութեանն և գրաբար լեզուի ուսման , Les Études Arménientes en Europe խորագրով հետաքննական ու հմտալից յօդուածներ կը հրատարակէ գաղղիարէն լեզուով , Լոնտոնի քաղաքական ու բանասիրական թերթի մը մէջ : Մեծապէս օգտակար սեպելով նաև մեր ազգայնոց՝ իրենց քիչ շատ ծանօթ , ու մերթ նաև անծանօթ այս տեղեկութիւնները , հետզհետէ պիտի հրատարակէնք ամսագրոյս մէջ անոնց թարգմանութիւնը , խոստանալով աւելցնել յետոյ՝ այսպիտի շահագրգիռ նիւթի վրայ ըրած մեր առանձինն ուսումնասիրութիւնը :

Արևմտեան բանասիրաց ու եւրոպացի գիտնոց հայկական լեզուի ուսմամբ հետաքրքրուելնուն զիմսաւոր պատճառն և շարժառիթ եղած է Աստուածաշունչ Գրոց հինգերորդ դարու մէջ եղած ընտիր թարգմանութիւնն : Լաքրոզ՝ որոյ վրայ քիչ ետքը առանձինն խօսե-